



# ՄԱՀԱՉԴ

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութիւնը խոր ցաւով կը գուժէ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամ՝

## ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՖԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 16 Մայիս 2003ին:

# ՄԱՀԱՉԴ

Ազգային Առաջնորդարանը խոր ցաւով կը գուժէ լիբանանահայ գաղութի ազգային - հասարակական դեմքերէն՝

## ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՖԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 16 Մայիս 2003ի գիշերը:

Թաղման եւ յուղարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երկուշաբթի, 19 Մայիս, կէսօրուան ժամը 1:00ին, Աճքի խաչի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ:

Պիտի կատարուի ազգային թաղում:

## ՅԱՒԱԿՅԱԳԻՐ

Յաւով տեղեկացանք վաստակաշատ ընկեր Երուանդ Մոնոֆարեանի մահուան մասին: Դեռեւն Հարեւոյնը միջնակցութեան վերջնական տարիներին առիթ ենք ունեցել այլ գործիչներ թուով ճանաչել ընկեր Երուանդին եւ իր նման գործիչներ օրինակով ճանաչել Դաշնակցութիւնը՝ իր ներկայիս դէմքով ու գործով: Կարճատեւ առիթներն անմոռաց յիշողութիւններ են թողել սիրելի ընկերոջ կուսակցական նուիրում-ծուրեան, սկզբունքայնութեան, ինչպէս եւ մարդկային արժանիքների վերաբերելով:

Հ. Յ. Դ. Հարստանի բոլոր ընկերների անունից մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնում ընկեր Երուանդ Մոնոֆարեանի հարապատներին, մտերիներին եւ կուսակցական ընկերներին: Համուլուած ենք, որ սիրելի ընկերոջ յիշատակը անմոռաց պիտի մնայ իրեն ճանաչողների յիշողութեան մէջ:

Հ. Յ. Դ. ՀԱՅՍՏԱՆԻ  
ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

# ՄԱՀԱՉԴ

- Խաչիկ, Մարի, Արմինէ Մոնոֆարեան
- Տիկին Ալիս Էմմէրեան եւ ընտանիք
- Ջաւէն եւ Ջապէլ Թաշեան
- Տիկին Հերմինէ Ստեփանեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Հրանդ Հայրապետեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Գօգօ Թաշեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Յովհաննէս Էմմէրեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Րաֆֆի Էմմէրեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Յովհաննէս Էմմէրեան եւ ընտանիք (Աւստրալիա)
- Տէր եւ տիկին Մանօ Տէր Մանուէլեան եւ ընտանիք
- Տէր եւ տիկին Մինաս Մինասեան եւ ընտանիք
- Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց եղբոր եւ Հարազատին՝

## ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՖԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 16 Մայիս 2003ին:

Յուզարկւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 19 Մայիս, կէսօրուան ժամը 1:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունելի իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին Հ. Յ. Դ. «Ազատամարտ» ակումբին մէջ:
- Կը խնդրուի Գուրգուրեան Կոնքրետի Կատարելի Հ. Յ. Դ. «Ազատամարտ» ակումբին:

# ՄԱՀԱՉԴ

Տիար Ժիրար Պաղպուտարեան  
Տէր եւ տիկին Արմենակ Պաղպուտարեան եւ զաւակունք  
Տէր եւ տիկին Մկրտիչ Պաղպուտարեան եւ զաւակը  
Տէր եւ տիկին Վազգէն Պաղպուտարեան եւ զաւակը  
Տէր եւ տիկին Ժորճ Բարսեղեան եւ զաւակունք  
Տիկին Մարի Պաղպուտարեան  
Վարդանեան ընտանիք  
Փայտեան ընտանիք  
Եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց զաւակին, եղբոր, հօրեղբոր, մօրեղբոր եւ Հարազատին՝

## ԳԵՈՐԳ ՊԱՂՊՈՒՏԱՐԵԱՆԻ

(Ծնեալ՝ 1951ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի 18 Մայիս 2003, առաւօտեան ժամը 5:00ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, 18 Մայիս, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Հանճոյ Սուրբ Գեորգ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրեր Շրպպէթի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայս ընդունելի իբրեւ մահազգ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին տէր եւ տիկին Ժորճ Բարսեղեանի բնակարանը, Խաչի Պատառի, Երկուշաբթի 19, Երեքշաբթի 20 եւ Զորեքշաբթի 21 Մայիսին:

# ԱՅՍՕՐ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ԱՉԳԱՅԻՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ՝ ԸՆԿ. ԵՐՈՒԱՆԴ ՄՈՆՈՖԱՐԵԱՆԻ

Այսօր, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ կը կատարուի Ազգային թաղում՝ ընկ. Երուանդ Մոնոֆարեանի, որուն մարմինը ապա կ'ամփոփուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան Հ. Յ. Դ. Պանթիոնին մէջ:

Ընկ. Երուանդ Մոնոֆարեան ծնած է 1937ին, Հալէպէ: Յաճախած է Սահակեան վարժարան, ապա Ազգային Քարէն Եփեֆ Ճեմարան, գոր աւարտած է 1956ին: Վարած է «Արեւելք» խմբագրի պաշտօնը:

1961ին Հաստատուած է Պէյրութ: 1965-1997 շրջը 30 տարի ստանձնած է Համազգայինի վարչի Սէֆեան տպարանի տնօրէնութիւնը:

Թիւնը, որուն գուժեցաւ սրբագրած, խմբագրած եւ հրատարակութեան յանձնած բազմաթիւ հատորներ:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն, ընկ. Երուանդ Մոնոֆարեան եղած է տիրական ղեմը, լիբանանահայ ազգային-քաղաքական բեմին վրայ հաստատուած սկզբը իբրեւ հերթապահ Հ. Յ. Դ. «Ազատամարտ» կոմիտէի (էլ Շեֆիէ), ապա իբրեւ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի անդամ եւ ներկայացուցիչ: 1992ին ընկ. Երուանդ Մոնոֆարեան ընտրուած է



Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ եւ մինչեւ 1995 անդամակցած է անոր: 2002ին ընտրուած է Սեֆի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան անդամ:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՌԻԱՏԻ ՄԷՋ ԽՍՏԻԻ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՀԱՔԵԿՉՈՒԹԻՒՆԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ շաբաթավերջին մեկնեցաւ Սէուտական Արաբիա, երէկ շարունակեց իր հանդիպումները: Վարչապետին կ'ընկերակցի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան:

Վարչապետը երէկ հանդիպում մը ունեցաւ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պըն Ապտէլապիլի հետ: Քննարկուեցան շրջանային իրադարձութիւնները, յատկապէս անցեալ շաբաթուան ընթացքին Ռիատի մէջ տեղի ունեցած ահաբեկչական պայթումները: Վարչապետը

տը խստի դատապարտեց պայթումները, որոնք խլեցին բազմաթիւ կոտորած:

Վարչապետ Հարիրի տեսակցութիւն մը ունեցաւ նաեւ ներքին գործոց նախարար Նայեֆ Պըն Ապտէլապիլի հետ:

Միւ կողմէ, վարչապետ Հարիրի Ռիատի կ'ընդունեց արտաքին գործոց նախարար Սէուտ Ֆայսալը:

Վարչապետ Հարիրի հանդիպում մը ունեցաւ պաշտպանութեան նախարար Սուլթան Պըն Ապտէլապիլի մէջ տեղի ունեցած ահաբեկչական պայթումները: Վարչապետը

Վարչապետ Հարիրի խստի դատապարտեց ահաբեկչութիւնը եւ ահաբեկչական գործողութիւնները:

Վարչապետ Հարիրի ընդգծեց, որ նման գործողութիւններ դատապարտելի են բոլորին կողմէ, յատկապէս արաբական եւ իսլամական աշխարհին կողմէ:

Ահաբեկչութեան դէմ պայքարող հաւա-

նական միջոցառումներուն մասին հարցումի մը պատասխանելով վարչապետ Հարիրի ըսաւ, որ միջապային առումով տարուող ջանքերը աշխուժ են, սակայն աշխարհի մէջ կայ չարի ու բարիի միջեւ բախում, ինչպէս նաեւ իսլամութեան միջեւ բախում:

«Գոյութիւն ունի նաեւ մարդոց փոքր խմբակ մը, որ կ'ուզէ իսլամութիւնը ամբողջ աշխարհին ներկայացընել իբրեւ ահաբեկչութեան տիպարը, սակայն իսլամութիւնը նման աքթերէն շատ հեռու է», ըսաւ վարչապետը:

Հարիրի այցելեց Ռիատի փոքր կառավարիչ Ապտալա Պէլ-ժիտի եւ ցաւակցութիւն յայտնեց անոր՝ իր պակաս մահուան համար: Պէլ-ժիտի որդին կոհ գացած էր Ռիատի պայթումներուն:

Ներկայ էին երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան եւ Ռիատի մէջ Լիբանանի դեսպան Պասսաւ Նասանի:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Արքոց Հռիփսիմեանց Կուսանց Գահատակութեան յիշատակին նուիրուած աղօթքի ամսուան առիթով, Չորեքշաբթի, 21 Մայիս 2003, երեկոյեան ժամը 6:30ին, Ա. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ժամերգութեան պիտի հանդիսարկուի եւ քարոզէ՝

### ԳԵՐԸ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սիրով կը հրաւիրեմք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ ունկնդրելու սրբազան հօր պատգամը:

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

## ՍՏԱՅԱՆԸ

«ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՅ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ ՈՅ - ՌԻԴԱՓԱՌ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ»

Բ. տպագրութիւն Հեղինակ՝ ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԵՆՄԵՂԵԱՆ Հրատարակութիւն՝ Հայաստանից Եկեղեցւոյ Զինուորական Դատարարութեան Բաժանմունք Կաթողիկոսութիւն Հայոց Սեֆի Տանն Կիլիկիոյ Անթիլիաս, 2003

«ԺԻՐԱՅՐ ԵԱԳՈՒՊԵԱՆ ԵՒ «ԼՈՈՒ» ԵՐԳԻ ՌԻ ՊԱՐԻ ԸՍՈՅՈՅԸ»

Հրատարակութեան պատրաստութիւն՝ Մ. Ա. Ը. Ա. Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿԻ Պէյրութ, 2003

## ԱՆՆԱՐԿ ԵՐԲ ԿԸ ՊԱԿՍԻՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԼՈՒՐՋ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Ուղիղ շաբաթ մը կը բաժնէ մեզ Հայաստանի Ազգային Ժողովի ընտրութեան, որուն ի խնդիր կուսակցութիւններ, կուսակցութեանց միջեւ քաղաքական դաշինքներ թէ անհատ ներկայացուցիչներ իրենց թեկնածութեան յաջողութեան համար կը տանին քարոզչական լայն արշաւ: Յատկապէս մայրաքաղաք Երեւանի փողոցները լեցուն են որմնադիրներով, քարոզչական տարբեր լուսնադիրներով:

Ակներեւ է, սակայն, նոյն այդ կուսակցութեանց կամ անհատներու շատերուն մօտ նախընտրական լուրջ ծրագրի բացակայութիւնը: Քաղաքական անլրջութեան է նման կարեւոր ընտրութիւններու ներկայանալ առանց բանաձեւուած ծրագրի: Ի՞նչպէս կարելի է ընդունիլ, որ յատկապէս կուսակցութիւն մը կամ դաշինք մը ամբողջական ծրագրով մը չ'ներկայանալ ժողովուրդին: Իշխանութիւններուն դէմ քննադատութիւններն ու նշանները կարգախօսի վերածելը ամենէն դիրին ու ամենէն հեշտ բան է ռեւէ մէկուն համար: Սակայն ինքզինք յարգող կուսակցութիւն մը ամեն քննադատութեան անդին ստիպուած է երթալ, նախընտրական շինիչ ծրագրով ներկայանալ պահանջներով:

Քննադատութիւնը ամբաստանութեան ու բանաձեւի սահմանէն անդին չ'անցնի, եթէ փոխարէն շինիչ այլընտրանքներ չ'առաջարկուին: Եւ ահաւասիկ այս է, որ կը պակասի հայրենի քաղաքական բեմահարթակին վրայ ընդհանրապէս: Օրինակ, «Փոխնէք մեր կեանքը» իր կարգախօսով, Հ. Յ. Դ. ինքնաբով պատրաստուած ու երկու գրքով լոյս տեսած ամբողջական ծրագրով մը կը ներկայանալ հանրութեան, որ խորքին մէջ այլ բան չէ, եթէ ոչ մեր կեանքը ի՞նչպէս փոխելու շինիչ առաջարկները, բաժնուած քանակութիւններով գրուիներու. սոցիալ - տնտեսական քաղաքականութեան հիմնադրոյթներ, պետական կառավարման համակարգ, հակակոռուպցիոն քաղաքականութիւն, կրթութիւն, գիտութիւն, մշակոյթ, աշխատանք եւ վարչապետութիւն, բնակարանային - կոմունալ ոլորտ, սոցիալական ոլորտ, ֆիզիքական կուլտուրա եւ սպորտ, միգրացիա, հարկապիտանութիւն եւ դրամավարկային քաղաքականութիւն, արտաքին տնտեսական քաղաքականութիւն, գիտականութիւն, առողջապահութիւն, արդիւնաբերութիւն, ձեռնարկատիրութիւն, տրանսպորտ, պրօսաւրջութիւն, Հայաստան - Սփիւռք, Արցախ, բանակ, սահմանամերձ տարածաշրջաններ, ազգային փոքրամասնութիւններ, երիտասարդութիւն, բնապահպանութիւն եւ արտաքին քաղաքականութիւն: Իսկ այս քանակութիւններով իրենց կարգին բաժնուած են կէտերու եւ ենթագիտելիներու: Այլապէս Հ. Յ. Դ. կարգախօսը եւս պիտի մնար օդին մէջ նետուած սուկական լոպուրդ, որ անիմաստ է ու կը ծառայէ պարպապէս ընտրական նեղ հաշիւներու:

Հ. Յ. Դ. նման հապի քանի մը այլ կուսակցութիւններ ունին այսպիսի լուրջ ծրագրի, մինչ շատերը, յատկապէս իշխանութեան ընդդիմադիրները պարզ են ծրագրի եւ իրենց կարգախօսը վստահած են հակա-իշխանական, կամ իշխանափոխութեան իրենց աման կոչելու միայն:

Յամենայնդէպ հայրենի մեր ժողովուրդը քաղաքական հասունութեան տէր է ըստ ամենայնի, հետեւաբար յաւ գիտէ դիրքորոշուիլ եւ իր քուէով կրնայ տալ ճիշտ պատասխանը բոլորին, կրնայ ընտրել ու յաւ «ձեւաւորել» հայութեան վայել խորհրդարան մը:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

## ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

### ՀԱՍԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ 2003-2004 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Վաչէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւնը՝ 2002-2003 ուսումնական տարեշրջանին կրթաթրշակ յատկացուցած է 181 համալսարանական ուսանողներու:

Հիմնարկութիւնը հաճոյքն ունի յայտարարելու, թէ այս տարի եւս կրթանպաստ պիտի յատկացնէ ուսանողներու, որոնք կը փափաքին լիաժամ (full time) համալսարանական ուսման հետեւիլ 2003-2004 ուսումնական տարեշրջանին:

Կրթաթրշակի դիմումները ստանալու համար՝ կրթանպաստ տացող բոլոր նախկին ուսանողները, ինչպէս նաեւ նոր թեկնածուները պարտին ներկայանալ Հիմնարկութեան Գրասենյակը, 13 Մայիսէ մինչեւ 30 Մայիս 2003 (բացի Շաբաթ օրերէն), կէսօրէ առաջ ժամը 11:00էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00, ստորեւ նշուած հասցեին:

Վաչէ եւ Թամար Մանուկեան Հիմնարկութիւն  
Ժէ Էլ Տիպ Հրապարակ,  
Մալախ Սենթր, Տրոյ յարկ  
Հեռաձայն՝ 04-713532

ՎԱՉԷ ԵՒ ԹԱՄԱՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԳՐԱՍԵՆՏԱԿ

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԻՄՆ ԳՐԱԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԴՐՏՆԵՐՈՒ ՀԱՄԱԽՄՔՈՒՄԻ ԿՈՐԻՉԻՆ

Ուրբաթ, 16 Մայիս 2003ի երեկոյան, Անթիլիասի Մայրավանդանոցի մէջ Համախմբուած շուրջ 100 Հայ Համալսարանաւարտներ, մեծ մասամբ նախկին Հեղինակներ (Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութիւն), մաս կազմեցին Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի հրահանգով տրուած ճաշկերոյթին:

Այս առիթով, Համախմբուած մեր ազգային եկեղեցական կեանքը վերանորոգող շարժումի մը վերածելու նպատակով, վեհափառ Հայրապետ փոխանցեց իր Հայրական խօսքը, մղելով ներկայ Համալսարանաւարտները պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ մասնակից դառնալու Հայութեան կեանքին:

Ազգային-եկեղեցական ու Համայնքային մեր կեանքին նոր որակ տալու եւ ներկայութիւն դառնալու գործընթացին մէջ, Հայ Համալսարանական երիտասարդութեան ներդրումը կենսական նկատեց վեհափառ Հայրապետը: Ան գնահատանքով արտայայտուեցաւ նաեւ այն իրողութեան, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Հովանաւորութեան ներքեւ գործող Հեղինակ շուրջ քառասուն տարիներէ ի վեր Հայ Համալսարանականները քով-քովի բերելով, զանոնք Հայ եկեղեցւոյ ու ազգային կեանքին մէջ ներգործող ուժի կը վերածէ: Նորին Սրբութիւնը թելադրեց ամէն գնով զօրավիգ կանգնել անոր, որպէսզի Լիբանանի բոլոր Համալսարաններու Հայ ուսանողութիւնը մասնակից դառնայ մեր Հաւաքական կեանքին:

Կաթողիկոսարանի դիւանապետ ինչիկ Տէտէեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ, որ Համալսարանաւարտ երիտասարդութեան առաջին Հանդիպումէն ետք այս երկրորդը՝ վեհափառ Հայրապետին օրհնութիւնը ստանալու Համար է, իբրեւ ուղեցոյց յառաջիկայ աշխատանքներու: Այս իմաստով վեհափառ Հայրապետը գնահատելով կատարուած աշխատանքն ու ճիգը, Հայրապետական խրատներէ պատգամով հիմը դրաւ Հայ Համալսարանաւարտներու Համախմբումին, շեշտելով մեր ազգային եկեղեցական կեանքին ներս գիտակից Հայ երիտասարդութեան գործն մասնակցութեան անհրաժեշտութիւնը:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՍԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹ

### ԱՄԵԼԻ ԲԱՆ ՀԱՐԻՐ ԴԵՌԱՏԻ ԵՐԳԻՉՆԵՐՈՒ ԿԱՐԿԱՉԸ՝ ՏՊԱԿՈՐԻՉ



Համաձայն տարիներու իր սովորութեան, Համազգայինի մանկական, պատանահասակ «Կարկաչ» երգչախումբը իր տարեկան համերգով, դեկտեմբեր 17-ին, խմբավար Չարաբէ Չարաբէի, դարձեալ ներկայացաւ լիբանանահայութեան: «Կարկաչ»-ի այս տարեկան ելոյթը տեղի ունեցաւ Շարաբէ, 17 Մայիսի երեկոյան ժամը 7:00ին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի «Էսէմպլի Հոլ» սրահին մէջ: Ելոյթը կազմակերպուած էր Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան կողմէ եւ կը վայելէր հովանաւորութիւնն ու ներկայութիւնը Լիբանանի Առաջին Տիկին Անտրէ Լահուտի: «Կարկաչ»-ի տարեկան ելոյթին ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպ. Խաչերեան, ՄԱՀԱՄԻ Կեդրոնական Մարմնի ատենապետ վեր. դոկտ. Փօլ Հայտնութեանի ներկայացուցիչ վեր. Ներսէս Պալպանեան, Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսեան, լիբանանահայ կազմակերպութիւններու ու միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ երաժշտասէր բազմութիւն մը:

«Կարկաչ»-ի երեք բաժանումները արեւի քան երկու ժամ տեւողութեամբ գեղեցիկ կերպով մատուցեցին շուրջ երեք տասնեակ հայերէն, արաբերէն եւ այլ լեզուներով մանկապատանեկան, ժողովրդային ու ազգային բնոյթի երգեր, որոնք մեծապէս արժանացան ներկայութեան գնահատանքին: Նշենք, որ մեկնաբանուած երգերուն շարքին կային յատկապէս «Կարկաչ»-ի համար յօրինուած հին եւ նոր երգեր: Յայտագիր ընթացքին առանձնաբար քանի մը երգ: Իսկ երեք պատանեկան երգչախումբին սանդուխի վրայ, տրուած ըլլալով, որ անոր անդամներուն մշակուած կարկաչը սրահը լեցուց մանկական առոյգ ձայներու ու երգչախումբային որոշ մակարդակի տիրապետած երգեցողութեան հնչիւններով:

Նախքան ելոյթին աւարտը, «Կարկաչ»-ի անդամները ընթերցեցին Արցախի «Վարանք» քոյր երգչախումբին անդամներուն կողմէ յղուած շնորհաւորական նամակը եւ երգչախումբին տարիներու նախկին դաշնակահար Չեղա Մարկոսեանի հայրենիքին եկած գիրը: «Կարկաչ» այս տարուան իր ելոյթով կարեւոր ուսումնառական երգչախումբի նուաճումներուն սանդուխի վրայ, տրուած ըլլալով, որ անոր անդամներուն մշակուած կարկաչը սրահը լեցուց մանկական առոյգ ձայներու ու երգչախումբային որոշ մակարդակի տիրապետած երգեցողութեան հնչիւններով:

### ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՅ ՄԱՆԿԱՊԱՍԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԼՈՅԹ



Լիբանանահայ գաղութի կազմաւորման, Պուրճ Համուտ Հայաւանի ստեղծման եւ Մեծ Եղեռնէն ճողոպրած Հայութեան թելադրութեան փրկութեան գործին մէջ մեծ դերակատարութիւն ունեցած է Հայր Պօղոս վրդ. Արիս: Իր եկեղեցական սրբանիւնը ներքեւ ժողովրդանուէր էութիւն մը թաքցուցած ազգային, հասարակական, քաղաքական գործիչը եւ քրիստոնէական գոհարներու խոր գիտակցութիւնը ունեցող հոգեւորականը իր իմացական կեանքի ամբողջ տեւողութեան եղած է իր ժողովուրդին հետ, ականջալուր եղած է գաղթական Հայութեան ցաւերուն ու տառապանքներուն եւ իր ունեցած յաճախ Համեստ միջոցներով փորձած է ամօքել անոնց ցաւերը:

Պուրճ Համուտի առաջին քաղաքապետին (1952-1961) Պօղոս վրդ. Արիսի յիշատակը պանծացնելու Համար, Շարաբէ, 17 Մայիսի երեկոյան ժամը 8:00ին, Պուրճ Համուտի «Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ, կազմակերպութեամբ Հայ Կաթողիկէ Համալսարանական Միութեան ղառապետական յանձնախումբին, տեղի ունեցաւ յիշատակի հանդիսութիւն մը: Պօղոս վրդ. Արիսի կեանքին ու գործունէութեան՝ բարձր հովանաւորութեամբ Հայ Կաթողիկէ Ներսէս Պետրոս ԺԹ. պատրիարքին:

Յիշատակի հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Հայ Կաթողիկէ Համալսարանական Միութեան ատենապետ Միհրան Նաճարեան:

Այնուհետեւ ներկայացուցեց Հայր Պօղոս վրդ. Արիսի կենսագրութեան գիծերը, որուն յաջորդեցին Առաքել Մինասեանի, Ժողովարար Պատիկեանի, Աւետիք Տէրունեանի, Անթուան Արիսի, Անդրանիկ Ազրապետի եւ յայտնի գրող ու հրատարակագիր Շահանդուխտի յուշերն ու վկայութիւնները:

Պուրճ Համուտի փոխ քաղաքապետ Բաֆֆի Կէօօյանեանի խօսքէն շրջանաւ շրջանաւ եղած ժամանակակից շրջանակէն Հ. Պօղոս Արիսի անցած հիմնական գործունէութեան մասին: Ան մասնաւորապէս նշեց հետեւեալ 5 կարեւոր հարցերը, որոնց լուծման Համար աշխատած է Պօղոս վրդ. Արիս:

1.- Կալուածներու եւ հողերու բաժանումը Պուրճ Համուտի եւ Ժաէյտի քաղաքապետութիւններուն միջեւ:

Շար.ը՝ էջ 10

**ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԳԵՌՈՐԳ ՀԱՐՊՈՅԵԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ**  
Չալքա, հեռ. 04-711565  
2003-2004 տարեշրջանի նախնական արձանագրութիւնները նախկին եւ նոր աշակերտներուն համար սկսած են արդէն եւ կը շարունակուին ամէն առաւօտ ժամը 9:00էն մինչեւ 12:00, բացի Շարաբէ եւ Կիրակի օրերէն:  
Դիրացնելու համար վերաճուող աշխատանքները, նախկին աշակերտները պարտին այժմէն իսկ արձանագրուիլ:  
Նորեկ աշակերտներէն կը պահանջուի բերել  
1.- Ինքնուրուագծուած թուղթ լուսապատճէն,  
2.- Երկու լուսանկար,  
3.- Սկրտութեան հաստատագիր,  
4.- Նախորդ տարուան վիճակագրոյց,  
5.- Պատուաստման վկայագիր:  
**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ**  
Նախագահութեամբ՝  
**ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**  
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)  
Կը ներկայացնէ՝  
**ՉԱՔԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ (շուի, թաւ շուի) ՄԱՐԻԱ ԵՍԱՅԵԱՆ (դաշնակ)**  
Երեքշաբթի, 27 Մայիս 2003, երեկոյան ժամը 8:30ին, «Մոնօ» սրահին մէջ:  
ՍԱԿ՝ 20,000 եւ 10,000 Լ. Ն.  
●Տոմսերը ստանալ՝ Ազգային առաջնորդարանէն, Ազգային վարժարաններէն, «Նարեկացի» եւ «Համազգային» գրախանութներէն:

**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ**

**FUEL CARDը գործածեցէք**  
  
Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:  
Երբ մագուիթ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով  
**04 / 715111 - 222 - 333** թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍԱՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Համուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»-ի մօտ
- ▶ SPEED - Հանքաշ, Կալէրի Իթփիատ
- ▶ ՀԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմագա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Հարթ Պուարմէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Սիպայէ
- ▶ SPEED - Նահր, «Փեօփ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնթապի մուտքին
- ▶ MALLAH - Պապատէ

Մեծանուն յորինող Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակի նուիրուած տօնակատարութիւններու ծիրէն ներս, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կազմակերպած էր գեղարուեստական երեկոյ մը՝ նուիրուած յորեկեանին: Նուագահանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 18 Մայիսի երեկոյան ժամը 8:00ին, «Տեմիրճեան» կեդրոնի սրահին մէջ:  
Գեղարուեստական երեկոյին բացման խօսքը արտասանեց Անի Եփրեմեան, որ անդրադառնալէ ետք Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին առիթով տեղի ունեցող միջազգային տարողութեամբ տօնակատարութիւններուն, հակիրճ տողերու մէջ ներկայացուց անոր կեանքն ու գործը:  
Գեղարուեստական երեկոյին յայտագիրը հարուստ էր ու ամբողջութեամբ կը բաղկանար Արամ Խաչատուրեանի տարբեր յորինումներէ շուրջ երկու տասնեակ կտոր հաշուող ընտրանիէ մը, որ ներկայացուցաւ զանազան Վասիլի Ռոյլի եւ սրնգահար Հրաչ Իսահակեանին կողմէ: Յայտագիրը կ'ընդգրկէր նաեւ Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններու ընկերակցութեամբ երկու պարեր, զորս ներկայացուցին Նոր Սերունդ Մշակութային Միութեան պարախումբի խումբ մը պարմանուհիները:  
Ժամանակակից դասական երաժշտութեան Հայ հակային ձոնուած այս գեղարուեստական երեկոն Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակին գոհարահետ տօնակատարեց նաեւ Հայ մշակույթի ժամանակակից յաջողակները:

### ՄԻՋՐԱՆՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Հայաստանի մեջ սկսած ընտրապայքարը Բալայանի փոխարինումը և իր արձագանքները սկսաւ ունենալ...

Իրենք գիրքերը ընդդիմութեան ներկայացուցիչներ կոչող անհատներ դարձեալ սկսած են իրենց քատերական ներկայացումներուն միջոցով Միհրանին դերը վերապահելով իրենց անձնուրումը:

Բնորակային կեղծիքներու մասին նույնիսկ ընտրութիւններէն առաջ խօսողները շարքաբերով հրապարակեցին զարմանալի վկայականներով Միհրանին նահանգներու արտաքին գործոց նախարարութեան եւ ԵԱՀԿի տեղեկագիրները:

Հիմա, նախընտրական այս օրերուն, նոյն անգամները սկսած են լսուիլ ու անոնց հետ «Արդարութիւն» դաշինքէն գատ բոլոր կողմերուն հասցէին նախատական արտայայտութիւններ:

Հասցէները ու կը կրկնենք: Գաղութին մէջ բաժանարար նոր գիծեր ստեղծելու, ատելութիւն հրահրելու այս վարպետները դատապարտուիլ է:

### ՀԱՄԱՔԱԿԱՆ ԱՂՕԹՔ ՆՈՒԻՐՈՒԱԾ Ս. ՀՈՒՓՄԻՍԵԱՆՅ ԿՈՅՍԵՐՈՒ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՁ

Ի գիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին, այսու կու գանք յայտնելու, որ Հոփմիսեանց կոյսերու տօնը այս տարի կը զուգահեռաբար տօնախմբուի 16 Յունիս 2003ին:

16 Յունիս 2003ին, Երկուշաբթի երեկոյեան ժամը 7:30էն սկսեալ պիտի կատարուի եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ, քարոզ եւ քափօր կոյսերու մատուցմանը, ապա հարաբարական խոստովանանք, հաղորդութիւն, վարդերու բաշխում եւ ջրօրհնք:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու սոյն արարողութեան, եւ վերահաստատուելու Ս. Հոփմիսեանց կոյսերու հաւատքով:

Ի ԴԻՍԱՅ ՆՈՐ ԱՏԱՆԱՅԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելու թիւերուն: - 258526, 260115 եւ 241274:

### ՍՐՔՈՑ ՀՈՒՓՄԻՍԵԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ

2003 - 2004 ՏԱՐԵՆԴՋԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Տնօրէնութիւնն բաց կը յայտարարէ 2003-2004 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 5 Մայիս 2003էն սկսեալ ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերանուսի գրասենեակի աշխատանքները արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան, անհրաժեշտութեամբ: Հայ դպրոցը տունն է հայ զակիին, ուր՝ մօրը կաթին նման, կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւելի իր հայեցի պատկանելիութեան եւ կը դառնայ չորս լեզուներով զարգացած, ապագայի օգտաշատ հայ, քրիստոնէայ, տիպար քաղաքացի:

Նորից աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուղթի լուսապատճեն կամ իրարձ քայտ, մկրտութեան վաւերագիր, պատաստներու եւ առողջ վիճակի վկայագիր, արեան խմբաւորում եւ 4 լուսանկար:

2003 - 2004 տարեշրջանին եւ մանկապարտեզի փոքրիկներուն կը մատակարարուի նախաձայն եւ ձաշ, վարժարանին կողմէ:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ՝ ՀԻԼՄԱՐ ՔԱՅԶԸՐԻ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ազգային հոգեմտաւոր անդամաստիւն ջրգեղման առընթեր ալլապէս սրտառուէ եղելութեամբ պարուրուած պատեհ առիթ մը հանդիսացաւ ակադեմական կրթութեան տէր, վաւերական պատմաբան, գիտահետազոտող եւ հասարակական գործունէ շարքաբեր Հիլմար Քայզըրի այցելութիւնը Լիբանան:

Արժէքաբանական գուճահեռ հանգամանք, խորհրդատու տարողութիւն եւ դաստիարակիչ տարբեր մարզեր ընդգրկող միջազգային մը ստեղծման շարժառիթը զգեցաւ, երբ ամբողջ հայութեան համար անջնջան կենսական ու գօտեպնդիչ համարուող Հայկական Յեղասպանութեան մարդկային, իրական կենսամթաքարաբանական ճշմարտացիութիւնը փաստարկելու եւ միջազգային ամպիոններուն վրայ ամբողջելու համար անջնջան տեղի նպաստն ու օրինակելի ներուժը ունեցաւ, ցարդ կատարուած աշխատանքներու հետ միտեցող:

Յիրաւի, յոյժ գնահատելի նախաձեռնութեան (պատմաբանին հրաւէրը Լիբանան) կողքին, յատկապէս յիշատակելի տարբեր մը առիթով ու մանաւանդ ճամնօրինակ տիպի մը բնագոյնով երոյթները ունեցան բազմաձայնակարգակ թելադրականութիւն, աշակերտական, ուսանողական թէ ընդհանրապէս հասարակական միջավայրին վրայ:

Աւելին. անհատական ու հաւաքական գիտակցութեան մէջ, իր որոշադրիչ պատկերը ուրուագծելէ ետք, ան յաջողեցաւ ձեւաւորել իմացական իրավիճակ, շնորհիւ իր յախուռն եւ ակադեմական ընկալելի ոճին, յանդուգն ընկալելի ու մանաւանդ արհեստավարժ ըլլալու իրողութեան:

Այսուամենայնիւ, վերոյիշեալ ընդգծումներուն առընթեր անհրաժեշտ է լուսարձակի տակ առնել անոր էական յատկանիշը՝ արժեքափայլի կուռն տարածարանութեամբ յարաբանայ, հարցերն ու անոնց հոլովոյթը ըստ էութեան քննութեան առարկայ դարձնել, ինչպէս նաեւ կաճառային երկխօսութեան հայեցակարգ ստեղծել, պարզապէս ճշմարտութեան աներկրայ յարթանակին սատար կանգնելու վճռականութեամբ:

Այս իմաստով, ուշագրաւ էին անոր դրսեւորումները, հարցերուն մօտեցնելու եզակիութիւնը, որով կրցաւ ընթացիկ

հասկացողութեան ձեւաբանութիւնը կառուցուածքային բովանդակութիւն հաղորդել ունկնդիրին:

Սակայն, էականը, ուսանելին հետեւեալն է.

Քայզըրեան բեմահարթակը ուղեւորիչ համարել, արտացոլացնելով մեզ հետաքրքրող առանցքային հիմնախնդիրները: Հայկեանքի ժամանակակից պատմահոլովոյթը իր դրական արտայայտութիւններուն կողքին, կ'ընդգրկէ բացասական տարրեր, որոնցմէ կարելի է ձեւաբանութիւն միայն, երբ մեր հետազօտիչ ակնարկներուն կիցապէս կը հանդիսանան հայրենիքն ու սփիւռքեան ոստաններու առաւել ուժեղացումը:

Ստուգելու, երբ համայնակուլ երեւոյթները կը դադրին նորովի տեղ գրաւելէ բոլոր մակարդակներուն եւ բնագաւառներուն վրայ:

Երբ ստորակայութեան բարդոյթը գիտակցական հոգեխառնուածքի փոփոխութիւն ընդգրկէ:

Երբ պատկանելիութեան զգայնութիւնը յամբարուս վաճան եւ վերասլացք ուղղութիւններ կը ճշդէ:

Երբ բարոյագրող արտասանութիւնները կ'այլափոխուին, վեհապանծ արարքներու դիմաց:

Երբ օտարամուտ բարքերու կասեցումը կը համարեն իր արժանիքն ու մարդկային մեր տեսչերուն կենսագործման «քուրաչ»-ին մէջ:

Երբ ազգակերտ մեր կուռններու վերանորոգումն ու վերելքը բոլորիս գերխնդիր յանձնառութեան սեւեռակէտը կը դառնայ:

Աւելին. երբ թշուառ իրականութեամբ մը առկայ, ներհայեցողական ակնարկներու փոխարէն յոյժապէս կը վատնուին մատուցողաւորութիւնները:

Այսուհանդերձ, հայ ժողովուրդին ողջ պատմութիւնը վաւերականօրէն ցոյց տուած է հակառակին փաստն ալ: Ազգագործան ինկալել յորձանուտին ի դէմ, անձնուրաց ու հաւատարիմ, ցեղային առանձնապատկութիւններով թաթաւուած հայրերի ներուժները ցայտուն են ամենեւին: Անոնց ազգային հօգոյ գիտակցութիւնը կը ճախրէ հոգիով բեկեալ մահկանացուն եւ զլուրէին ի վեր, այլապէս սրտաթոխիչ ու պանծալի հոգեկերտ կոթողներ աշտարակելով:

Հետեւաբար կը մնայ ըստարեւելի: Իրողութեանը ներդրակ շողկապուծով եւ

յստակ ուղղուածութեամբ առաջնորդել նորահաս սերունդը, որ այնքան պայակուն ունի բոլորիս աշակերտութեան եւ գուրգուրանքին, ճամբան հարթելու լուսակերտ ապագայի մը հաշուոյն: Այստեղէն կարելի է հետեւեցնել անվերապահօրէն, թէ առիթը պէտք է ընծայել երիտասարդական փաղանջին իր տարբեր երանգներով ու շերտերով, ընդարձակելու իր ներքին հորիզոնը, իրականացնելու վառ երազները, թափանցիկութեամբ ոգեւորուելու անոր պանծալի եւ ժամանակակից արհեստագիտութեան ընձեռած կարելիութիւններուն օգտագործումով նուաճելու բեւեռներ:

Քայզըրեան վարակիչ օրինակը կ'ենթադրէ անպայման մերը, հարազատը, ինքնուրոյն ունենալու արդար եւ ազնիւ պահանջները: Աշխարհահռչակ փորձեցօրներ Ռիչըրտ Յովհաննէսեաններու եւ վահագն Տարբաններու եւ բազմաթիւ այլոց շնորհիւ ներկայութիւնը միջազգային բարձրագոյն ամպիոններու վրայ, ցուցանիչ են ծինարանական առողջ շարունակական երթիչը:

Երբ անդին, հազիւ պատմական մատնահաշուաւ արշալոյս ապրելով աղանդաւորական նորեւ լուկ փերեզակներ, «Կը յանդգնին» մեզմէ խել հազարամեայ ազգային բիւրեղացած արժէքներ, Լուսաւորիչն ու Մաշտոցը, վարդաւ Մամիկոնեանը, կոմիտասն ու Արամ Նաթուրեանը, աւելին՝ աստուածակերպ Սուրբ Նարեկի անգամ:

Չուզահեռներ ընդգծելու հրամայական պահանջին ակնաջալուր, արթնամտութեան եւ ազգային ներուժի գիտակցութեամբ շարունակելու մեր երթը, իւրաքանչիւրիս անյետաձգելի պարտաւորութիւնն է, յատկապէս հայ քաղաքական մտքին հուսալուծութեան եւ նպատակակէտային յառաջդիմութեամբ:

Որովհետեւ, խիզախութեամբ առաջնորդուած սերունդները երեսուցիկ ստեղծութեամբ կենսագործած են յեղաշրջական ամէն արարք, տեսչավար երազներու իրականացման եւ զպիսեկութեան ճանապարհին վրայ:

Որովհետեւ, լպիրշ որոգայթներու թատերաբեմ մերօրեայ կեանքը, կ'անճրկի այլապէս Գաղափարին ու Գործին կառչած երիտասարդութեան դիմաց:

ՀԱՄԱԿ ԳԻԼԱՆԵԱՆ

### ՄԱՅԻՍ. ՄԱՅՐԵՐՈՒ ԱՄԻՍ

Կա'նք, պիտի լինէ'նք, ու դէ՛ռ՝ շատանա'նք՝ Պ. ՍԵԻԱԿ

Մայրերու ամիսն է դարձեալ, Մայիսը գարնանաշունչ, որ ժամադրութեամբ ճշդապահ, ողջունեց մայրերն համայն: Բնութեան դեմքը պայծառ, լուսաւորեց օճախները ջերմացած: Վարդերու հետ բուրակտ, կը թուլկոտին մաղթանքներ, շրթունքներէն հարգատ, որ մայրերու մեր բարի, մեղաւ առողջ ու արի: Հայ ազգը ըլլայ միշտ հպարտ, մայրերով մեր նուիրեալ, ու տան ազգին քաջարի, զաւակներ արիասիրտ, որ պահպանեն հայրենիք, գանձերն հայոց պանծալի:

Մայիսին այս վարդաբոյր, ծաղկափունջին մեր ծաղկուն, մեր մաղթանքներն առ մայրեր, կը կապենք երգ սիրագեղ, թէ մայրերն հայոց ըլլան պտղաբեր, արգասաբեր, ինչպէս արտերն են յուրօրի, եւ անդաստանները դալար: Հայ ընտանիքն օրհնուի անուժով բարձր սերունդին, թեւաւորուին նորափետուր «կուռնկները» հայ ազգին:

Օրեր բարի, բախտեր բերրի, մայրերուն մեր սիրասուն, որ փոխան մէկի գրկէն օրհնեալ գաւակներ բազում: Ծնչաւորեն հրաշք էակներ, ու գարմացնեն վատ բշտամից, թէ հայն արդէն բազմացած է բիւր համարներով, ու նախանձն դեղին՝ ապշի...

Մայրերը մեր միւռոնաբոյր, պիտի ծնին սերունդներ բիւր, որ հայն ապրի յաւերժօրէն, ու «շատանանք» մաղթանքով Պարոյր Սեւակին: Ողորմի տանք բանաստեղծին, որ հիշեցնէ պատգամ անեղծ, երկինքէն Հայաստանին: Խօսքը թուրն սաւառնումով հեքիաթային, հասնի մինչեւ Սփիւռքը հայուն, ու չմի՛ռն ոչ մէկ հոգի, սարսուռովը ցաւ-ձուլումի...

Մեզար օրհնէք մեր մայրերուն, նորապսակ մեր հարսերուն, որ քաջութեամբ դիմակալեն մարտահրաւերները պայքարի, պատասխանեն երբ խափանող արգելքներուն, եւ արշաւով մը հայկականեան, ուխտեն բալի դէպի Սասուն, հանդիպելու Դեղձն Մամից, եւ Դաւիթին մեր հրաձիկ, որ հեռանա շարքերն ամէն, հայոց հողէն, պանդխտութեան մեր աշխարհէն:

Մեր մայրերուն արեւ օրեր...

ՀԱՆՆԵՐՈՒՄՏ

### BALTAYAN ELECTRONIC

Ա. մասնաճիւղ  
Պարթ Համուր,  
Արմենիա պրոպագանդա,  
հեռ. 01 / 262901

Բ. մասնաճիւղ  
Տայրա, հեռ. 01 / 259600

### ԵԿԵՔ ՃԱՐԱԴՈՒՆԵՔ

Կը սիրեն պատմութիւններ հնարել, երեւակայութիւնը աշխատանքով, շարադրել...

Մ ա ս ն ա կ ց է՝ «Պատիկ-Մպտիկ»-ի շարադրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

- Արձանագրութիւնները տեղի կ'ունենան 9 Մայիս 27 Մայիս, հեռաձայնելով 01-260115 թիւին, երկուշաբթի Ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 9:00էն մինչեւ երեկոյեան ժամը 5:00:

- Մրցումը տեղի պիտի ունենայ կիրակի, 1 Յունիսին, «3. Տէր Մեկրեան» թատերասրահին մէջ, առաւօտեան ժամը 10:00-12:30:

Բոլոր մասնակցողները պէտք է թատերասրահ գտնուին ժամը 9:30ին:

Մասնակցողները պէտք է իրենց հետ ունենան իրենց գրեմական պիտոյքները:

- Իւրաքանչիւր մակարդակի առաջին, երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան արժեքատուր նուէրներ:

- Արդիւնները պիտի յայտարարուին «Պատիկ-Մպտիկ»-ի Ուրբաթ 20 Յունիսի թիւով:

### Մայրերու Տօնին Առիթով ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՎԱՆԵՐ

հայրենի երգիչ եւ ջութակահար՝ ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ընկերակցութեամբ՝ Մագո Պետրոսեանի եւ իր նուագախումբին

Մասնակցութեամբ՝ հանրածանօք երգիչ - երգչուհիներու եւ դերասաններու նաեւ՝ հաճելի անակնկալներ

Ճոխ եւ խանդավառ մթնոլորտի մէջ, հայկական, ռուսական, քնչույական, արաբական եւ յունական յայտագիր

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 24 Մայիս 2003-ին, երեկոյեան ժամը 9:00-էն սկսեալ ճաշարան Al Amin-ի, մէջ Լոււլայի-ժամփող, մայրուղիի վրայ:

• Տոմսերը ստանալու համար դիմել GEKA Records Յեռ. 03/242685 եւ յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել՝ հետեւեալ թիւերուն 03/741230 - 03/666060 - 03/667687



# Մշակութային Էջ

## ԵՂԵՌՆԵՐ ԵՒ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉԸ...

Եղեռնը արմատապես ցնցեց մեր ժողովուրդը: Բնական է, որ այդ ցնցումն ամենն առաջ ելեալ ամենն անբերական էր: Գրողներն ու արուեստագետները: Հայ արուեստի բոլոր տեսակներուն մէջ իր զբաղումը գտաւ Եղեռնի թեման եւ իր արհաւիրքներով, աւերներով ու սարսափներով փոխանցուեցաւ հետագայ սերունդներուն: Եթէ Եղեռնը չհուշագրուէր արուեստով, ապա զայն մեր ազգային յիշողութենէն սրբելը դիւրին պիտի ըլլար: Ընդհակառակն, այսօր հայ նոր սերունդը եւս (վկայ՝ Աթոմ Էկոյեանը) կը շարունակէ արուեստի գործերով միջազգային խիղճը շարժել՝ յօգուտ Հայկական Գատին:

Հայ գեղանկարիչները ի սկզբանէ բազմաթիւ պատկերներն ու անդրադարձան Եղեռնի թեմային եւ այսօր գեղանկարչական հարուստ ֆառանգութիւն մը ունին յուշերու շարքին: Եղեռնը Եղեռնի թեմային մը ունին յուշերու շարքին: Եղեռնը Եղեռնի թեմային մը ունին յուշերու շարքին:

Նախ Եղեռնի սերունդը հարտորէր պատկերեց եղբրական տեսարաններ, ինչպէս՝ Արշիլ Կորբի Արշիլեան, Տիգրան Փոլատ, Խորէն Տէր Յարութեան, Սարգիս Խաչատրեան եւ ուրիշներ: Ապա յաջորդ սերունդը, որ առաւելաբար իր լսածները պատկերել, շատ աւելի մեծ փառանք մը կը կազմէ եւ շատ աւելի իր ձայնը կրցաւ լսելի դարձնել միջազգայնորէն, ինչպէս՝ Գառուգու, Ժաննա, Փօյ Կիրակոսեան, Ժաննա Գառուգու եւ շատ շատեր: Բացի յիշեալներէն, հաւանաբար չկայ սփիւռքահայ գեղանկարիչ մը, որ առնուազան քանի մը անգամ անդրադարձած չըլլայ Եղեռնի թեմային: Իսկ թրքական կոտորածներու թեման առաջին անգամ հայ իրականութեան մէջ պատկերեց Յովհաննէս Ալվազովսքին: «Հայերու ջարդը Տրապիզոնի մէջ», «Հայերու նաւ կը լցընեն», «Հայերը կենդանի կը նետեն ծովը» եւ «Թրքական նաւուցի պայթիւնը» ստեղծագործութիւնները լատինապէս կը վկայեն այս մասին:

Նոր սերունդին մէջ կը մեծ ունինք բազմաթիւ գեղանկարիչներ, որոնք ուղղակիորէն կը պատկերեն եւ կ'անդրադարձան Եղեռնի թեմային: Իսկ, եթէ խօսքը կը վերաբերի անուղղակի անդրադարձներուն, ապա այդ պարագային ջարդը ընդհանրական կը դառնայ: Երբ հայ արուեստագէտը իրաւ է ու անկեղծ, չի կրնար ազդած ու ցնցուած չըլլալ Հայկական Յեղափոխութեան իրողութենէն, որովհետեւ այն, ինչ որ թուրքերը ծրագրեցին ու իրագործեցին խաղաղասէր ու ստեղծագործ ժողովուրդի մը հանդէպ, վեր է մարդկային ամէն դատողութենէ: Եղածը սահմակեցուցիչ ու անբերական չի պարզապէս: Այսուհանդերձ հայ արուեստագէտ նոյնիսկ եթէ ուրախ թեմաներ շոյափէ, ապա տեղ մը եւ չափով մը Եղեռնը պիտի արտայայտուի անոր գործերուն մէջ, որովհետեւ, Եղեռնը չէ աւարտած դժբախտաբար: Ան կը շարունակէ մտալիկ ու տանջել նոր սերունդները: Զայն գործադրող տակաւին ցեղասպանութիւնը ճանչնալու, ոչ քաղցրութիւն եւ ոչ ալ մարդկային հասկացողութիւնը ունի: Ուրախութեամբ կը շարունակուի նաեւ ազգային կորուստի ահաւորութեան նկատմամբ: Ուրեմն, եթէ հայ արուեստագէտը չի դաւաճաներ իր արեան կանչին, ապա Եղեռնը ոչ միայն պիտի հետեւի անոր իր կեանքի ողջ ընթացքին, այլեւ տարեբայնորէն պիտի արտացոլայ իր ստեղծագործութիւններուն մէջ:

Կամայ ակամայ Եղեռնի մաս կը կազմէ մեր կեանքին...

ՄՈՒՎՍԵՍ ԾԻՐԱՆԻ

**ԱՅԿԻԼ AFHIL**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ**

**RENT AND SALE**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen We Also Provide
- Laboratory service.
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

**ՑՈՒՑԱՐԱՐՎ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԵՐ ԳՐԱՄԵՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԿԻՏ ԺԵԼԵ, Բ. ՅԱՐԿ ԳՆՈ. (01) 242556/7**

**NO MATTER WHAT YOU NEED... OR WHERE YOU NEED.**

**ԵՂԵՐՆԵՐ ԵՒ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐԻՉԸ...**

## «ԱՌԱԳԱՍՏ»Ի ԶՐՈՒՑԱՍՐԱՎՏԻ ՆԻՐՆ Է ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ԺԱՆՍԷՄԸ

Վերջերս ֆրանսահայ գեղանկարիչ Ժանսէմ Երեւանի Յեղասպանութիւնը թանգարանին մէջ ցուցադրեց եւ ապա թանգարանին նուիրեց իր ստեղծագործութիւններէն հայկական կոտորածներուն նուիրուած շարքը: Յուշագրութեան առաջ հայրենի «Առագաստ» ամսաթերթի թղթակիցը հանդիպում-զրոյց մը ունեցած է մեծ արուեստագետին հետ, Փարիզի մէջ, զոր կու տանք ամբողջութեամբ:

Յովհաննէս Միրիսեանի Սեմէրեան ծնուել է Թուրքիայում, 1920ին: Եղեռնից ազատուած ծնողի հետ անցել է Յունաստան, ապա Ֆրանսա, որտեղ էլ ստացել է իր ուսումը՝ աւարտելով Փարիզի գարդանկարչութեան (տեքորաթիւ) արուեստի դպրոցը:

Առաջին անգամ իր նկարները ցուցադրուել են «Անկախներ» սրահում: «Հայուհի» (1946), «Հայկական հարսանիք» կտաւները արժանացել են ֆրանսացիների ուշադրութեանը: Այնուհետեւ հասարակ մարդկանց պատկերող նկարներով արժանացել է բազում մրցանակների: Անհատական ցուցահանդէսներ է ունեցել աշխարհի շատ խոշոր քաղաքներում: Նրա գործերը ցուցադրուել են պահուում են Եւրոպայի եւ Մ. Նահանգների բազմաթիւ թանգարաններում:

Ջարդ: Այսպէս է անուանել ֆրանսական ժամանակակից արուեստի ակադեմիայի դեմքերից մէկը՝ Ժանսէմը (Յովհաննէս Սեմէրեան) Փարիզի Մաթիլիոն փողոցում գտնուող իր ցուցահանդէսը:

Մի քանի տարի է, ինչ այցելուել են Ժանսէմի ցուցահանդէսներին, սակայն երբեք չեն տեսել հեղինակին իր իսկ ցուցասրահում: Հետագայում ինձ պարզ դարձաւ, որ նկարիչը երբեք ներկայ չի լինում ո՛չ ցուցահանդէսի բացմանը, ո՛չ նկարների ցուցադրման ողջ ընթացքում:

Մեկուսի, բաշտուած իր ընդարձակ արուեստանոցում, աշխատում է ինքնամոռաց: Ժանսէմը 80 տարեկան է:

Իր նկարագրի հաւատարիմ՝ նա նկարչութեան ոլորտ է մտել անաղմուկ, առանց շեփոթի: Ժանսէմի գործերն այսօր շրջում են ողջ աշխարհում՝ Եւրոպայից մինչեւ Ճափոն, մինչեւ Մ. Նահանգներ: Ճափոնում հիգը թանգարան է գործում Ժանսէմի անուանով: Ինքն այս ամէնին նայում է հեռուից ու վրձնահարում իր պատկերները:

Այս անգամ մեծ մեր հանդիպումը տեղի ունեցաւ իր աշխատանոցում՝ մեղմ ու թափանցիկ եթերային գոյների հսկայ կտաւների հարեւանութեամբ: Նկարներից լոյս եւ երաժշտութիւն էր յորդում:

\*\*\*

Պարոն Ժանսէմ, շնորհաւորում ենք մեր 80ամեակը եւ ցանկանում առողջութիւն եւ ստեղծագործական աւելի: Երէկ ցուցահանդէսում էինք, շատ լաւ ընդունեցին մեզ այնտեղ, հանդիպեցինք նաեւ Հայաստանից եկած հայ գիտնականների եւ նկարիչների, որոնք հիացած էին մեր աշխատանքներով: Այնտեղ էր նաեւ մեր կեանքի

երկար տարիների ուղեկիցը՝ տիկին Հռիփսիմէն, որն, իմիջիայլոց, հիացալի է խօսում հայերէն:

Ակնապիշ նայում էինք Ջարդի տեսարանները, ցնցող էին յատկապէս «Կապույտ կոտորած», «Ջարդի տեսարան մը», «Գաղթողներ», «Յուսահատութիւն», «Բոնաբարութիւն», «Մարտիրոսացում», «Կարմիր արեւ», «Նախապատրաստութիւն շարդի մը համար», «Տեղահանութիւն», «Յիսուսի գողգոթան», «Ռեքուիէմ», «Մահուան յաղթանակ», «Կտրուած ծաղիկների պէս», «Սալեյիլութիւն», «Ջարդ» կտաւները:

ՀԱՐՑՈՒՄ.- Ինչո՞ւ «Ջարդ», իսկ ինչո՞ւ ոչ «Եղեռն» կամ «Կոտորած», սա իմ առաջին հարցն էր:

ՊԱՏԱՍԻԱՆ.- Ամէն անգամ, երբ ցուցահանդէս մը տամ, պէտք է անուն մը տրուի, կամ երբ նկար մը գծեմ, պէտք է անուն մը դնել, ատիկա հեշտ խնդիր չէ, շատ խորհեցայ Violence, այնուհետեւ Genocide, վերջը Massacre. ամէնէն ճիշդն է: Այսինքն՝ Ջարդն է, որ ստեղծեց այս կտաւները:

Հ.- Վերադառնաք նկարներին: Դուք շարդը չէք տեսել: Այդ մասին մեզ պատմողներ անշուշտ եղել են, նաեւ մեր ընտանիքի բշուառ վիճակը Թուրքիայում՝ այնուհետեւ մեր գերդաստանի գաղթը Յունաստան, այնուհետեւ՝ Ֆրանսա:

Պ.- Այո՛, Ջարդը չեմ տեսած, զինուոր ալ չեմ եղած: Երբ թուրքերն սկսան հայածել հայերը, Պոլիսէն չսկսան, որովհետեւ հոն տարբեր պետութիւններու դեպքանտուներ կային, չէին համարձակեր: Սկսան ժողովուրդը տեղահանել գիւղերէն: Մայրս կը պատմէր այդ մասին, առաջին հերթին ժողովցիներ իրիտասարդները, անոնց մէջ է եղեր մօրեղբայրս, որուն կախիւր են, իսկ ծնողքս ոտքով քալել են մինչեւ Պաղատ: Ինծի միշտ կը հետաքրքրէր, թէ ինչպէս են անցել այդքան երկար ճանապարհ, միշտ կը հարցնէի՝ ինչ կ'ուտէին, ո՞ւր կը պուկէին: Եթէ-ուր տարեկան էի եւ այս ամէնուն մասին յաճախ կը լսէի մօրմէս: Հիմա չեմ կրնար ձեռք պատմել, որովհետեւ մինչեւ Տէր Զօր գացող եւ ողջ մնացողներ հազուադէպ են: Մայրս հասեր է: Երբ պզտիկ էի, այդ պատմութիւնները շատ կ'ազդէին հոգեկանիս վրայ:

Հ.- Բնիկ որտեղացի՞ եմ մեր ծնողքը:

Պ.- Սելեզ, Սելեզ գիւղը, որ Թուրքիա կը գտնուի: Այնտեղ է ծնուել նաեւ հայոց ամէնէն մեծ զրոգներէն Յակոբ Օշական: Տարիներ յետոյ Օշական եկաւ Իսիլ-Մուլիս տեսնալու, թէ ինչպէս կ'ապրին իր հայրենակիցները:

Նոր Թուրքիայէն փախանք, 1919ին թուրքերը ուժաթափ եղան, պարտուեցան, յոյներ կ'աճապարէին Այա Սոֆիան գրաւել, յարձակեցան թուրքերուն վրայ եւ մինչեւ մեր գիւղը եկան: Մենք օգնեցինք յոյներուն, բայց վերջը թուրքերը հակապարձակման անցան, յոյները նորէն պարտուեցան, շատեր ջուրը թափուեցան, մահուկներով, նաւակներով, մենք ալ անոնց հետ փախանք: Դէպքը կը յիշեմ: Երբք տարեկան էի եւ ինչպէս կը յիշեմ, ծովը կը տեսնակ, կանաչ, երկինքը կարմիր, նաւակներուն մէջէն կախուած ձեռքեր, արիւն, կրակ, բոց: Լուզրի մէջ Տեղաբնակի նկար մը կայ, երբ տեսայ, ինծի թուաց, թէ ատիկա իրականին տեսած եմ: Այս ամէնը կը յիշեմ երազի մը պէս, այլ ամէնուն ալ, երբ աւելցնեմ մայրիկիս պատմածները, իմ հոս գտնուիլս երբեմն տարօրինակ կը թուի, ինքզինքիս կ'ըսեմ՝ ես ինչ գործ ունիմ Ֆրանսա այս մարդոց հետ, ո՛չ գլուխս անոնց կը նմանի,



Ո՛չ սիրտս, ո՛չ սարելակերպս: Պատճառն ի՞նչ է: Ու կը պատասխանեմ՝ պատճառը Ջարդն է: Այս ամէնը անկարելի է նկարչութիւնով տալ, երբ երիտասարդ էի, կը փափաքէի, բայց կ'ըսէի՝ ասիկա չի գծուիր, չի շինուիր, շատ զօրաւոր պէտք է ըլլաս, որ այդպիսի բաներ գծես: Երբեք չէի համարձակիր:

Հ.- Ցուցահանդէսում սահմանեցինք մի տեսարանի առջեւ, որը մարդկային գլուխների մի բլուր է մշուշի մէջ. արդեօք այն եւս իր նախապատմութի՛ւնը ունի:

Պ.- Այո՛, ունի, քրոջս ամուսինը, որ որք մըն էր, պատերազմի ժամանակ կորցրել էր իր ընտանիքը, իսկ իրեն կը տանի թուրք մը: Ընդհանրապէս թուրքերէն շատեր պատերազմէն ետք կը ժողովէին տղայ հայ երեխաներ եւ կ'օգտագործէին: Օր մը թուրքական կառավարութիւնը կ'իմանայ, որ թուրքերու տուններուն մէջ հայ մանուկներ պահուած են: Զինուորներ կը դրկէ եւ կը հաւաքեն հայերուն գաւակները, քրոջս ամուսինն է, որ կը պատմէ ասիկա, - երեխաներս լեցուցին սոյլի մը մէջ ու գիշերով անտառ տարին: Ես վախցայ ու կամացուկ մը դուրս սահեցայ սոյլին մէջէն, բայց հեռուէն կը հետեւէի իրենց: Տեսայ, որ հասան տեղ մը, զինուորները կեցան, անոնք մէկիկ-մէկիկ մանուկները կ'առնէին՝ կ'իթային ու նորէն կու գային: Սպասեցի, տեսնեմ՝ ի՞նչ կ'ըլլայ: Երբ զինուորները հեռացան, ես կամացուկ մը մօտեցայ, ի՛նչ պեսնեմ, բոլոր տղաներուն գլուխները կարգուած ուղղա-

կի բացատի մը մէջ, երբ տեսայ՝ մարեցայ... (Լուս է ժանսէմը):

Հ.- Ես յուզուած լսում էի նկարիչին: Այո՛, իրական ջարդ: Եւ կան մարդիկ, անգամ պետութիւններ, որ ասում են ջարդ չի եղել: Պարոն Ժանսէմ, մենք տեսանք նաեւ մեր «Քրիստոսի խաչելութիւնը» կտաւը: Սովորաբար խաչուած Քրիստոսին տեսել ենք գլուխը կախ, մեր Քրիստոսը դիտողին է նայում, ինչո՞ւ: Միայն կտաւում Քրիստոսը վեր է նայում: Դա որեւէ բան զուցանելու է:

Պ.- Երբ կը գծեմ, այդ բաները չեմ խորհիր, ամբողջ մէկ տարի աշխատելէ ետք, չեմ գիտեր ինչու ուզեցի Քրիստոս մը գծել, առանց խորհելու, թէ ան վեր պիտի նայի կամ վար, բայց կը գզայի Քրիստոսի մը ներկայութիւնը, Քրիստոս մը անգոյ, անմարմին, այդպիսին է իմ Քրիստոսը: Մտքով չէ, որ կը նկարեմ, չեմ խորհիր այդ ամէնուն շուրջ: Երբ կը գծէի զանգերը, չէի ուզեր սկիզբէն, որ ծաղիկներ ըլլան, բայց այդ պատահաներուն զանգերը կ'ուզէի լուսաւոր ըլլան, այսինքն լոյսով շինուած ըլլան, եւ երբ աւարտեցի գործը, խորհեցայ, որ անոնք ծաղիկի կը նմանին ու ծաղիկներ թափեցի անոնց շուրջը:

Ու չեմ գիտեր ինչու, երբեմն - երբեմն Քրիստոս մը կը գծեմ, ինքս ալ չեմ գիտեր՝ ինչո՞ւ: Ասկէ 30 տարի առաջ խոշոր Քրիստոս մը նկարելի էի 25 մեթր բարձրութեամբ, իմացայ, որ այս օրերուն կը ծախուի աճուրդի մէջ, ամերիկեան քաթալոկի մը մէջ տեսայ:

Իրաւ է, յուսահատական բաներ շատ կը շինեմ, երբ յուսահատելի վիճակի մէջ կը գտնուիմ, բայց ո՛չ, ո՛չ, յուսահատուած չեմ երբեք, ընդհակառակը, սակայն, երբ խորը երթեմ, տեսակ մը տիրութիւն մը կայ մէջս, ատիկա հայ ազգին սրտին մէջ ալ կայ, բայց աշխարհն այնքան գեղեցիկ է, որ չէք կրնար ըսել, թէ տխուր է աշխարհը, նոյնիսկ ծերութիւնը լաւ բան մը չէ. ըսենք, որ ան ալ իր առաւելութիւնը ունի, ըսենք կ'ապրինք 60, 70, 100 տարի, այլեւս ի՞նչ պիտի ընենք աւելին: Կարծես 100 տարին կը բաւէ ապրելու համար:

Հ.- Անցեալ տարի մեր հանդիպման ժամանակ, երբ խօսք եղաւ Հայաստան այցելութեան մասին, դուք հրաժարուեցիք՝ ասելով, որ Հայաստանը հիմա արուեստի կարիք չունի, ուրիշ օգնութեան կարիք ունի: Իսկ այսօր իմացայ, որ համաձայն էք, որ մեր «Ջարդ» ցուցահանդէսը տեղափոխուի Հայաստան՝ Յեղասպանութեան թանգարանում ցուցադրելու համար:

Պ.- Ես չփափաքեցայ ատիկա, երբ Փարիզի մեր դեսպանը՝ պարոն Նալպանտեանը ցուցահանդէսը տեսնելու եկաւ, շատ սիրեց գործերը, ըսաւ՝ ասոնք պէտք է Մոսկուայում ցուցադրենք. ասացի, եթէ հնարաւոր է՝ հանձնեմ: Այդպէս մնաց, այնուհետեւ որոշուեցաւ Մոսկուայէն տեղափոխել Հայաստան: Երբ ջրերս կաթողիլուս ալ այցելեց ցուցահանդէս, այնուհետեւ՝ իմ աշխատանոցը, խնդրեց խորանի համար Մայր Աստուածածին մը գծել, ես խոստացայ: Այնպէս որ, ստիպուած եմ այսքան տարիներէ ետք (1973 թ. եմ եղեր Հայաստանում) նորէն այցելել Հայաստան: Դուք գիտէք, որ ես շատ սիրեցի այդ տարիներու Հայաստանը, այստեղ Ֆրանսացիները կ'ըսեն, թէ կոմունիզմի ժամանակ եկեղեցիները փակ էին, ժողովուրդը եկեղեցի չէր այցելեր, ատիկա սուտ է:

Հարցազրոյցը վարեց ԳՈՒՄ ԱՃԵՄԵԱՆ



# «ԱՌԱԳԱՍՏ»Ի ԶՐՈՒՅԱՍՐԱՆԻ...

Շարունակում՝ 6րդ էջին

Մեր վագոնի Առաջին վեցամյա ընտանիքը արարողութիւններ կու տար, մեր մարդոց հետ կը ճաշէինք, եկեղեցին 10 - 12 ինքնաշարժ ունէր, որ իրեն կը պատկանէր: Ինծի ալ ինքնաշարժ տուին, որով ամէն օր կը պտտէինք Հայաստանի մէջ:

Հ. - Զանգեզուրում եղա՞ք:  
Պ. - Այո՛, ամէն տեղ գացի:

Հ. - Այս անգամ էլ Ղարաբաղը կը տեսնէք:  
Պ. - Կ'ըսեն՝ Ղարաբաղ բոլոր ծառերը կտրեր են: Երբ Հայաստան գացի 1973ին, շատ էր աղքատութիւնը, բայց ուրիշ երկիրներ գացած եմ, որ թէ՛ աղքատ են եւ թէ՛ անկանոն: Բայց Հայաստանը կանոնաւոր էր, փողոցները աղտոտութիւն չկար, ժողովուրդը հպարտ էր:

Հ. - Որքա՞ն ժամանակ է, որ Փարիզի Մաթիցինոն ցուցահանդէսում ցուցադրուեմ եմ ձեր գործերը:  
Պ. - Չորս ամիսը լրացաւ, իսկ մինչեւ Հայաստան երթալս՝ եւս 3 ամիս, ուրեմն ամբողջութեամբ՝ եօթ ամիս: Բայց քանի որ թանգարան - սրահը իմ սեփականութիւնն է, մինչեւ երկու տարի կը մնայ, մինչեւ որ նոր նկարներով փոխարինուին նախորդները:

Հ. - Շատ հաճելի, գեղեցիկ եւ ընդարձակ է ձեր բանգարանը:  
Պ. - Այո՛, խոշոր է, ընդարձակ ու յարմարաւէտ: Ժամանակին, երբ ցուցարար չունէի, ուրիշ թանգարանի մէջ կը ցուցադրէի նկարներս՝ ընդամենը մէկ ամիս: Այսպէս 20 տարի շարունակ ցուցադրուեցի եւ ուրիշ թանգարաններու մէջ, այնուհետեւ որոշ թանգարաններ ալ կան, որ ցուցահանդէսներ կը կազմակերպեն աշխարհի տարբեր երկրներու մէջ:

Հ. - Դուք մասնակցո՞ւմ էիք այդ ցուցահանդէսներին:  
Պ. - Անչ՛նչ, եղբր եմ Նիւ Եորք, Շիքագո, Լոնտոն, Հոնոլու և այլուր:

Հ. - Ներքեք խնդրեմ, ի՞նչպէս է, որ չսիրելով ճամբորդել, վերջերս եղբր Չեխոսլովակիայում:  
Պ. - Տղատ ըսաւ, թէ հայրիկ, քեզի նուէր մը պիտի ընեմ 80ամեակիդ առիթով: Հարցուցի, թէ ինչ նուէր պիտի ընես, ըսաւ, քեզի համար պտոյտ մը Աւստրիա, Պոլսկարիա կամ Չեխոսլովակիա: Այդպէս 15 օր ճամբորդեցի:

Իմ ցուցահանդէսները շատ - շատ են, ես չեմ երթար այդ առիթներով որեւէ երկիր: Օրինակ՝ 25 անգամ ցուցահանդէս եմ ունեցել Նիւ Եորք, Շիքագո՝ 25 անգամ, Փասադինա՝ 15 անգամ, Քանադա՝ 5 - 6 անգամ: Այս բոլոր ցուցահանդէսներում ներկայ եղած եմ միայն երեք անգամ: Ընդհանրապէս ուրիշ նկարչինք հաճոյ-

քով կ'երթան իրենց ցուցահանդէսներուն, ես չեմ երթար: Յրանալի մէջ ալ այդպիսի ցուցահանդէսներ ունեցած եմ, ես չեմ գացած, ներկայ չեմ եղած:

Հ. - Վեցեօրեակով եղե՞լ էք:  
Պ. - Այո՛, վեցեօրեակով դուրս կղզիի մը մէջ կ'ապրէի եւ ամէն առաւօտ կու գայի վեցեօրեակ աշխատելու: Հրաշքով լեցուն վեցեօրեակի մէջ չէնքեր կը գծէի, սակայն միշտ ծով կը տեսնէի, յատկապէս՝ երբ արեւն ալ ծով կը մտնէր, Այվազովսքին կու գար դէմս, ինքզինքս կ'ըսէի, որ տեսարանը այնքան գեղեցիկ է, որ չի գծուիր, անկարելի է այդ ամէնը նկարել: Բայց ի վերջոյ խորհեցայ, թէ ինչո՞ւ անկարելի պիտի ըլլայ, եթէ գեղեցիկ է, պէտք է գծուի: Որոշեցի Փարիզ երթալ, բերել ակուարիւններ ու քանի մը ամիս հաստատուի վեցեօրեակ, նայիմ, ինչպէս կ'ընամ տեսնել ծովը, ինչպէս կը զգամ այդ գեղեցիկութիւնը:

Երբ վերադարձայ Փարիզ, 25 խոշոր պատկերներ շինեցի՝ միայն երկինք ու ծով, նաւակներ ու կոնտրոլներ:

Հ. - Միխայիլ Կոլտայնիցի այցելեցի՞ք:  
Պ. - Ես ընդհանրապէս չեմ օգտագործեր իմին ճանչցած մարդիկը: Երբ վեցեօրեակ պրեքստի երեք ամիս, չգացի Միխայիլ Կոլտայնիցի հետ ինքզինքս ներկայացնելու անոնց, թէ հայ նկարիչ մը եկած է, ցուցահանդէս կու տայ, հայ եմ չէ՞, միայն հայ եմ... Միայն հայ եմ... (ծիծաղ)

Հ. - Արշիլ Կորբուկոն համարո՞ւմ էք հայ նկարիչ:  
Պ. - Սկիզբի գործերուն մէջ շատ հայկականութիւն կայ, այնուհետեւ չեմ տեսներ ոչինչ հայկական:

Հ. - Վերջին հարցս. Հայաստանում ձեր աշխատանքները ցուցադրուելու եմ Ապրիլ 24ին՝ Մեծ Եղեռնի օրուան առթիւ: Ինձ յայտնի է, թէ՛ որքան ժամանակով, յետոյ ի՞նչ էք անելու նկարները:  
Պ. - Ամէնն ալ ձգելու եմ Հայաստանին:

Շնորհակալութիւն գրոյցի համար, մինչեւ նոր հանդիպում, այս անգամ՝ Հայաստանում:

Փարիզ, Իսէ - 15 - Մուլիւնօ 2002 թ.

ԽՄԲ. Ժամանակը եկաւ Հայաստան եւ կատարեց իր խոստումը՝ Հայաստանին թողնելով իր ցուցահանդէսի թանկարժէք նկարները:

**www.aztagdaily.com**

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

**ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Ձեր շրջապատին հետ գործեր պիտի ունենաք, նոյն ատեն՝ ձեր գաւակներուն եւ ձեր հարազատներուն հետ: Ձանցեք ըլլալ համբերող՝ ամէն մէկուն խնդրանքը կատարելու պահուն:

**ՑՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Ձեր յաջողութիւնը պիտի փակե բերանները բոլոր անոնց, որոնք միշտ կը բամբասեն ձեզ: Շարունակեցեք ձեր շանքերը եւ պիտի յաջողիք զարմացնել զանոնք:

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Դրամական հարց մը դասաւորելու պիտի լծուիք: Եթէ մուրհակներ ունիք վճարելիք, կատարեցեք զանոնք: Միւս կողմէ, պիտի գանձեք գումարներ:

**ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Դուք ձեզ բողոքելու համար կ'ըսեք այն խօսքերը, որոնց հակառակը կը մտածեք: Ձեր այս կեցուածքը ոչինչի կը ծառայէ: Ճշմարտութիւնը արտայայտելը աւելի ճիշդ է:

**ԱՌԻՒԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Ձեր աշխատանքին մէջ տիրող լարուած մթնոլորտը կամ ճշունածութիւնը պիտի թեթեւայ: Այսպէս աւելիլալ պիտի զգաք, հանդարտութիւն պիտի տիրէ այսօր:

**ԿՈՑՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Ձեր շուրջիններուն տեսակետը առէք յանախ, մանաւանդ՝ ձեր գաւակներուն կարծիքը, քանի որ անոնք ինքնուրոյն են: Այսպիսով կրնաք համեմատել ինքնուրոյն ձեր շուրջը:

**ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Ձեր շուրջը գտնուող յուսանուրիշները պիտի մաքրէք ու փայլեցնէք, որովհետեւ կարօտով կը յիշեք այն անձները, որոնք այդ յուսանուրիշները յանձնած են ձեզի: Կարօտի զգացումներ ունիք այսօր:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Ձեր գործին կամ սապարէզին վերաբերեալ համարողութիւն մը պիտի կատարէք այսօր, որ պիտի փոխէ առօրեայ ձեր կեանքը եւ սովորականէն դուրս պիտի ելլէք:

**ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Քիչ մը դրամ դրէք մէկ կողմ, խնայողութեամբ, որպէսզի կարենաք մեծագումար հաշուեցոյցները վճարել դիւրութեամբ: Իմաստութիւնը օգտակար է միշտ:

**ԱՅՄԵԼՁԻՒՄ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Այսօր պիտի կատարէք անհրաժեշտ գնումներ, մասնաւորաբար՝ հագուստ-կապուստի վերաբերեալ, որոնց համար երկար տեսնել ի վեր կը մտածէիք: Օրը նկատաւոր է:

**ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Գործի վերաբերեալ գրոյց մը պիտի յանգի արդիւնքի: Պիտի կարենաք լաւ գործի մը տիրանալ: Օրը բախտաբեր է: Միշտ յոյսով ապրեցեք:

**ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Ոմանց կատարած նկատողութիւնները օգտակար պիտի ըլլան ձեզի: Ականջ տուէք ուրիշներուն տեսակետներուն: Եսակեղրոն մի՛ ըլլաք:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՄ / ԵՐԿԱՀԱՆԴԷՄ

## ՄԵՉԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԲԱԿՆԱԻՈՐ ՍՈՓՐԱՆՕ ՊԱՐՊԱՐԱ ՀԵՆՏՐԻՔՍ ԵՌՆԵՄՔՕԻ ՄԷՁ



Դասական երաժշտութեան իւրայատուկ էլոյթով մը լիբանանցի երաժշտասէր հասարակութեան պիտի ներկայանայ միջազգային համաժամանակաւոր երգչուհի Պարպարա Հենտրիքս, որուն լիբանանեան միակ էլոյթը տեղի պիտի ունենայ այսօր երեկոյեան ժամը 8:30ին, ԵՌՆԵՄՔՕԻ մէջ:

Միջազգային մակարդակաւոր երաժշտական մրցույթներու մրցանակակիր սոփրանօ Պարպարա Հենտրիքս անցնող տասնամեակներուն էլոյթ ունեցած է նշանաւոր բեմերէ, մասնաւորապէս միջազգային փառատօներու եւ իր մարմնաւորած է բազմաթիւ օփերաներու զիջարար հերոսուհիներու կերպարները: Իր երաժշտական հարուստ կեանքին զուգահեռ, երգչուհին ունեցած է նաեւ մարդասիրական ու ընկերային բեղուն գործունէութիւն, որուն ծիրէն ներս աւելցնելու հիմնած է «Տոր Փիս Էնտ Ռիթմիստիլիշըն» մարդասիրական կազմակերպութիւնը:

Պարպարա Հենտրիքս իր երաժշտական սապարակած է պատկառելի թիւով ժայնապանակներ, որոնք կը պարուտանան միջազգային դասական երաժշտութեան զոհարներէ օրինակներ, ինչպէս նաեւ օփերաներէ հատուածներ: Ան իր հրատարակութիւններու միջոցով շարքին ունի նաեւ երաժշտական վիտէօ - ժապաւէններ, ուր արձանագրուած են իր էլոյթներէն բաժիններ, ինչպէս նաեւ՝ համապատասխան երաժշտութեան հիմնական հետ իր միացեալ աշխատանքին արդիւնքը եղող գործեր:

Երաժշտական աշխարհին «Մայր Թերեզայ»-ն ճանչցուած ամերիկացի այս երգչուհին իր երաժշտական մարմնով շարքին ունի նաեւ երաժշտական վիտէօ - ժապաւէններ, ուր արձանագրուած են իր էլոյթներէն բաժիններ, ինչպէս նաեւ՝ համապատասխան երաժշտութեան հիմնական հետ իր միացեալ աշխատանքին արդիւնքը եղող գործեր:

## ԽԱՉԲԱՌԻ ԹԻՒ 5440

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- |  |   |
|--|---|
| <b>ՆՈՐԻՉՈՆԱԿԱՆ</b>   | <b>ՈՒՂԱՆԱՅԵՍ</b>                                      |
| 1. Ուղտի չուան - Կանացի կոշիկան բառ:                               | 1. Մազլոցող բոյս - Մորթալի բիծ:                       |
| 2. Փորձանք - Հայ դիցուհի:  | 2. Տմոյն, անփայլ - Տկար զինի:                         |
| 3. Չայնանիչ - Հոռոմէացի կայսր - Յոգնակերտ մասնիկ:                  | 3. Տառի մը անունը - Ծակածան, տոփասէր:                 |
| 4. Ցուցական դերանուն - Շոգմոգ:                                     | 4. Կուրան - Լեզուով մը՝ այո՛:                         |
| 5. Ուղեղի ոսկորէ պատան - Թերթի երես:                               | 5. Հորովակերտ մասնիկ - Թմրեցուցիչ հիւթով բոյս:        |
| 6. Մերմնափակ - Ասիական ոստան:                                      | 6. Բարձունք - Կակազել, թրուատել:                      |
| 7. Լկամ - Թուրքիոյ Քեմալիէ աւանի հայկական անուանումը - Այբուրբնէն: | 7. Անտէր - Մաքուր, անբիծ:                             |
| 8. Առաջին նաւապետը - Օձի գալար - Այբուրբնէն:                       | 8. Նորվեկիացի բեւեռախոյզ՝ Յրիտիֆ - Լիբանանի լեռներէն: |
| 9. Տան կտոր - Շիբանի:  | 9. Կապոց, տրցակ - Քուղ:                               |
| 10. Կրկնուած տառեր - Տոփա:   | 10. Ուրբանոյ մայրաքաղաքը - Կտրած կաթ - Եգիպտական դից: |
| 11. Գահաւորակ - Համազգեստ:   | 11. Կրակ - Մովային:                                   |

Թիւ 5439

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Կ	Ա	Ր	Ճ	Ա	Ս	Յ	Ե	Մ	Թ
2	Կ	Ղ	Ե	Ր	Ի	Ր	Ա	Պ	Պ	Ե
3	Ո	Տ	Ա	Վ	Մ	Ա	Ն	Պ	Պ	Կ
4	Պ	Ն	Ս	Գ	Մ	Ա	Կ	Կ	Կ	Կ
5	Ա	Կ	Ա	Ս	Կ	Ա	Կ	Ա	Ն	Ն
6	Պ	Ն	Ս	Կ	Մ	Ա	Ն	Պ	Պ	Կ
7	Ա	Կ	Ն	Ա	Ս	Կ	Ա	Ս	Թ	Թ
8	Ա	Կ	Լ	Զ	Ա	Մ	Ա	Թ	Ն	Ն
9	Չ	Ա	Տ	Գ	Ի	Ի	Ա	Ն	Ն	Ն
10	Ի	Լ	Կ	Ա	Մ	Ի	Ա	Ս	Ս	Ս
11	Լ	Պ	Պ	Տ	Ա	Ն	Ի	Ի	Ի	Ի

**ԱՅՍՕՐ**

- Երաժշտական երեկոյ՝ «Հարմոնի օր սուր», հիւթ՝ «Լէ Կրանտ օրկ», ժամը 6:00ին, Ֆրանսական Մշակութային Կեդրոնին մէջ:

- Երգահանդէս, էլոյթ կ'ունենան սփրանօ Պարպարա Հենտրիքս եւ դաշակահար Լաւ Տերուիկըրը, ժամը 20:30ին, ԵՌՆԵՄՔՕԻ մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ Ճիամփաղօ Թագանի գործերը, «Այտա Շերֆան» արուեստի ցուցարան, մինչեւ 6 Յունիս:

- Ցուցահանդէս՝ «Լէ Լիեօ տը լա մեմուար էքրիթ», ԵՌՆԵՄՔՕԻ մէջ, մինչեւ 29 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ճընի թրու քալըր», Ապտիլ Մաուլա Օուէյնի գործերը, «Աստիփափոն փոյր լը տեւելփման տսիալի կեդրոնին մէջ, մինչեւ 24 Մայիս:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժեօն ֆամ», Քարին Ուհայէի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարանին մէջ, մինչեւ 31 Մայիս:

**ԱԶԳԱԿ** 50 ՏԱՄԻՒ ԼԱՌԱՅՁ

19 Մայիս 1953

**ՍՈՒՆՉԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՐԱԲ ՈՒ ԱՐԵԻՄՏԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**



Ի գին յոգնաշան պատրաստութիւններու վերսկսած անգլեզգիպական բանակցութիւնները դարձեալ խզուեցան: Ինչ որ մերժուեցաւ գորավար Նեկիպի կողմէ, այդպիսի գործընկերակար մը եգիպտացի ազգային գերիշխանութեան դէմ ոսնձգութիւն մը նկատուած ըլլալով:

Անգլեւարաք յարաբերութիւնները այս առիթով ծայրաստիճան լարուեցան: Համայնքներու Պալատին մէջ, վարչապետ Շուրջիլի արտասանած ճանաչողական կարգի վերջին թափերը: Արաբական գրեթէ բոլոր թերթերը կրակ կը ժայթքեն անգլիական դիւանագիտութեան պետին վրայ, գանգակներու շուրջ: Սուէզի գոտիին պարպումին փոխարէն, Լոնտոն Գա-

**ԱՅՍՕՐ՝ 19 ՄԱՅԻՄԻՆ**

1969 - Մահ բանաստեղծ Արսէն Երկաթի:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՅՈՒՆԻ ԱՄՈՅՆԱՆՈՒԹԻՒՆ

**- ՕԼԻՄՓԻՔ - ԱՀՏ՝ 1-0  
- ԹԱՏԱՄՈՆ ՍՈՒՐ - ՆԵՐՄԵ՛  
2-5**

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիան 20րդ հանգրվանի մրցումներուն, գազաթի ճակատումը Օլիմպիքի եւ Ահտի միջեւ վերջ գտաւ ի նպաստ առաջինին՝ 1-0: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Օլիմպիք 44 կէտով առանձնացաւ պարագուլի դիրքին վրայ, մինչ Ահտ նահանջեց 3րդ դիրքը, չորս կէտով ետ մնալով անկէ: Վերջին շաբաթներուն բաւական ձախող արդիւնքներ արձանագրող Ահտ իր դիրքը զիջեցաւ Ներմէի, որ Սուրի մէջ 5-2 արդիւնքով պարտութեան մատնեց Թատամոնը:

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Ներմէ բարձրացաւ 2րդ դիրքը, երեք կէտով ետ մնալով Օլիմպիքէն:

Ստորեւ՝ 20րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները:

Անսար - Սաժէս	0-0
Թատամոն Սուր - Ներմէ	2-5
Ահտ - Օլիմպիք	0-1
Սաֆա - Մապարա	1-1
Սալամ - Շապալ Սահէլ	1-0
Պըրժ - Ախա Ալէյ	3-4

## ՔԱՆՉԻՕ ԼԱՅԻՕ ԱՊԱՀՈՎԵՅ «ՉԷՄՓԻԸՆԶ ԼԻԿ»Ի ՏՈՄԱԸ

Իտալիոյ ֆուտբոլի ֆեդերացիան (Բալչիօ) 33րդ եւ նախաՎերջին հանգրվանի մրցումներուն, 4րդ դիրքը գրաւող Լացիօ Ռոմա իր դաշտին վրայ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պընջիան, յառաջիկայ եղանակին համար ապահովեց «Չէմփիլըզ Լիկ»ի մրցաշարին իր տոմար՝ Եռվենթուսի (ախոյան), ինչպէս Միլանի (2րդ) եւ Ա. Սէ. Միլանի (3րդ) հետ: Նշենք, թէ Լացիօ ցարդ նուազագոյն պարտութիւն կրող խումբն է (3), նկատի ունենալով, որ ախոյան Եռվենթուս կրեց եղանակի իր չորրորդ պարտութիւնը, երբ 2-1 արդիւնքով պարտուած հեռացաւ Ռեճինայի դաշտէն (15րդ): Հակառակ իր արձանագրած այս յաղթանակին, սակայն, տակաւին Ռեճինա կը գտնուի վտանգաւոր դիրքի վրայ, նկատի ունենալով, որ վերջին չորս դիրքերը գրաւողները կը փոխադրուին Բ. դասակարգ: Այժմ Փիաչենցա (16րդ), Բոմա (17րդ) եւ Թորինօ (18րդ) փոխադրուած են Բ. դասակարգ:

Ցարդ Ա. դասակարգ բարձրանալու իր տոմար ապահոված է Սամտորիա, որ շաբաթավերջին 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Բալիարին:

Ստորեւ՝ 33րդ հանգրվանի մրցումներուն արդիւնքները:

Արալանթա - Բոմօ	2-1
Բիելօ - Ա. Էս. Ռոմա	0-0
Լացիօ Ռոմա - Պընջիա	3-1
Ա. Սէ. Միլան - Պոլոնիա	3-1
Մոտենա - Ինթեր Միլան	0-2
Փարմա - Փիաչենցա	3-2
Փերուցիա - Ուտինեզե	0-2
Ռեճինա - Եռվենթուս	2-1
Թորինօ - Էմփոլի	1-1

ԴԱՍԱՌՈՐՈՒՄ

	ՅԱՂԹ. ՀԱՒ. ՊԱՐՏ.	ԿԷՏ	
1. Եռվենթուս	20	4	69
2. Ինթեր Միլան	17	7	64
3. Ա. Սէ. Միլան	18	7	61
4. Լացիօ Ռոմա	15	15	60
5. Բիելօ	16	7	55
6. Փարմա	14	11	53
7. Ուտինեզե	15	8	53
8. Ա. Էս. Ռոմա	13	10	49
9. Պընջիա	9	14	41
10. Պոլոնիա	10	11	41
11. Փերուցիա	10	11	41
12. Էմփոլի	9	11	38
13. Մոտենա	9	10	37
14. Արալանթա	7	14	35
15. Ռեճինա	9	8	35
16. Փիաչենցա	7	6	20
17. Բոմօ	3	12	18
18. Թորինօ	4	9	20

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՌԵՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Լիբանանի մէջ թէ ալյուր կրթական յառաջողութեամբ հաստատուողները կ'օգտուին **ՓՈԼԻԿԼՕՐ ԲՈԼԷՃԵՆ**

Շրջանաւարտ Ուսուցիչներու Ծառայութեան Անոնք ունին

- Մանկավարժական մասնագիտութիւն
- Կոչում եւ նուիրում կրթական գործին
- Լիբանանեան պետական ծրագրին քաջածանօթութիւն
- Պետական մանկավարժական վկայական


ԲՏ. ՏՏ. ● ՓՈԼԻԿԼՕՐ ԲՈԼԷՃԵՆ կ'երաշխաւորէ իր շրջանաւարտները:

Դիմել՝ **POLYGLOT EMPLOYMENT DEPARTMENT**  
Dora - Tel. 01-251320

## ՖՈՐՄԱՆԻՆԳ

### ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐ՝ ՍՓԻԼՊՈՐԿԻ ՆԵՐՈՍԸ

Ֆորմիւլա 1ի 2003ի աշխարհի ֆորմիւլաներուն ճակատումը Օլիմպիքի եւ Ահտի միջեւ վերջ գտաւ ի նպաստ առաջինին՝ 1-0: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք Օլիմպիք 44 կէտով առանձնացաւ պարագուլի դիրքին վրայ, մինչ Ահտ նահանջեց 3րդ դիրքը, չորս կէտով ետ մնալով անկէ: Վերջին շաբաթներուն բաւական ձախող արդիւնքներ արձանագրող Ահտ իր դիրքը զիջեցաւ Ներմէի, որ Սուրի մէջ 5-2 արդիւնքով պարտութեան մատնեց Թատամոնը:



Ստորեւ՝ խումբերուն դասաւորումը:

1.- Ֆեռարի	64
2.- Մաքլարըն	63
3.- Ռընօ	35
4.- Ուիլիլիմս	35
5.- Ճորտըն	11
6.- ՊԱՐ	11
7.- Սաուպըր	8
8.- Ժակուար	4
9.- Թոյոթա	3

22րդ լէփին, Եռվենթուսը, որ իր առաջին փիթ-սթափ կը կատարէր, արկածէ մը փրկուեցաւ, երբ անոր ինքնաշարժը կրակ առնել սկսաւ, սակայն խումբին օգնականները յաջողեցան տէրը դառնալ կացութեան, մարելով կրակը:

Շաբաթ օրուան փոփոխութիւններուն մրցումներուն եւս Եռվենթուսը հանդիսացաւ առաջին:

Երէկուան մրցումը երկու անգամ ընդմիջուած է ետք երրորդին միայն սկիզբ առաւ, նկատի ունենալով, որ պրագիլի Բրիսթիանօ Տա Մաթթայի ինքնաշարժը թոյլօթաւ, երկու անգամ թեքնիք խանգարում ունեցաւ:

Ստորեւ՝ վարորդներուն դասաւորումը:

ԿԷՏ

1.- Բիւի Ռայքոնըն (Ֆիլիպինս) Մաքլարըն	40
2.- Միքայէլ Եռվենթուս (Գերմանիա) Ֆեռարի	38
3.- Ռուպէն Պարիլլօ (Պրագիլ) Ֆեռարի	26
4.- Ֆեռնանտօ Ալոնսօ (Սպանիա) Ռընօ	25
5.- Տէյվիտ Բուլթարտ (Բրիտանիա) Մաքլարըն	23

**«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՈՐՈՒՄ ԱՅՏԱՎՈՐՆԵՐԸ**

- ժամը 8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- ժամը 8:45 «Աստղեր»
- ժամը 11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- ժամը 12:00 «Մարուր պահենք հայերէնը»
- ժամը 3:00 Արաբերէն յայտագիր. հարցազրոյց երգահան եւ բանաստեղծ Ալի Նասսարի հետ
- ժամը 6:00 «Շայ երգաչափ»
- ժամը 8:00 «Պատասխան եւ շահ»

## ՆԵՆԵՆԱՐԱՄ - ԺՐՈ ԿԱՐԾԵԼԼԻՒ ԱՌԱՋԻՆ



Կարծելի

Իտալիոյ հեծելարշաւի շրջավազքին (Ժրո) 7րդ հանգրվանի մրցումը, որ տեղի ունեցաւ Չաբաթ օր, Ալեյանոյէն՝ Թերմինիլիօ (143 քմ.), վերջ գտաւ իտալացի հեծելարշաւի Շթեֆանօ Կարծելիի յաղթանակով (Սիտերմէք), որ այսպիսով շահեցաւ առաջին լեոնային հանգրվանը, արձանագրելով 3 ժամ 55 վայրկեան եւ 19 երկվայրկեան արդիւնք մը: 29 տարեկան Կարծելիի նախապէս շահած էր 2րդ հանգրվանի մրցումը:

Երէկուան 8րդ հանգրվանի մրցումը, որ տեղի ունեցաւ երէկ, Ռիեթիէն՝ Արեյօ (214 քմ.) վերջ գտաւ իտալացի Մարիօ Զիփոլիւնիի յաղթանակով:

Ընդհանուր դասաւորման պարագուլի դիրքը այժմ կը գրաւէ Կարծելիի:

**ԺԻՉԷԼ ԽՈՒՐԻ՛ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՀԻՒՐԸ**


Քաղաքական յայտագիրներու խմբագիր եւ հաղորդավար

**ԺԻՉԷԼ ԽՈՒՐԻ**

«Վանայ Զայն»էն, Երեքշաբթի, 20 Մայիս 2003ին, կէսօրէ կոր ժամը 3:00ին, ուղղակի չայնասփռուիլիք հարցազրոյցի մը ընթացքին կը պարսխանէ ՀԱՄԱՀԱՍՏԱՒԻ հարցումներուն պատկերասփիւղի «Արապի» կայանին հետ իր գործակցութեան ալ իրապարակ հարցերու մասին:

## ԱՐՄԵՆԱԼ ՇԱՐՇՅԱՒ ԱՆԳԼԻՈՅ ԲԱԺԱԿԸ

Անգլիոյ ֆուտբոլի բաժակի մրցաշարին աւարտականի մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ օր Քարտիֆի «Միլե-նիում» դաշտին վրայ, Արսենալ 74 հազար համակիրներու ներկայութեան 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սաութհէմթընը, շնորհիւ Ֆրանսա-ցի Ռուպէր Փիլիպի նշանակած կոլին (38րդ), արժանացաւ տիտղոսին:



Տէյվիտ Սիմըն՝ իր շահած բաժակով

Այսպիսով, Արսենալ թիմին համար հանդիսացաւ երկրորդ խումբը (1982), որ յորդաբար երկրորդ տարին ըլլալով կը տիրանայ այս տիտղոսին: Անիկա անցեալ եղանակին 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Չեմսըն:

Մինչ Արսենալի խմբագետ Տէյվիտ Սիմըն ուրախ էր իր կարգին այս իրազդրութեամբ, Սաութհէմթըն երկրորդ անգամ ըլլալով կը հասնէր աւարտականին, սակայն կը պարտուէր:

Յամենայնդէպս, հակառակ իր այս կրած պարտութեան, անիկա պիտի մասնակցի Եւր. Է. Է. Ֆ. Ա. Ֆուտբոլի մրցաշարին, նկատի ունենալով որ Արսենալ պիտի մասնակցի «Չէմփիլըզ Լիկ»ին:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՅՈՒՆԻ ԼԻԿԱՅԻ ԲԱՏԱԿԻ ԱՄԱՐՏԱԿԱՆԻՆ

### ՄՈՆԱՔՕ - ՍՈՇՕ՝ 4-1



Մոնաքոյի մարզիկները կը տօնեն իրենց յաղթանակը

Ֆրանսայի ֆուտբոլի լիգայի բաժակի մրցաշարին աւարտական մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ օր «Սթատ տը Ֆրանս»ի մէջ, Մոնաքօ 4-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Սոչոն, տիրացաւ տիտղոսին: Իշխանապետական կազմին մարզիկները, իրենց այս յաղթանակէն ետք, իրենց մարզիկին՝ Տիտիէ Տեշանի համար մեծ իրազդրութեամբ կատարեցին, նկատի ունենալով որ ան այսպիսով մարզիչի իր ասպարէզին ընթացքին, շահեցաւ իր առաջին բաժակը:

Էրիք Ժիուլի (57րդ եւ 78րդ), Սեպասթիան Սըուիլի (61րդ) եւ Տասօ Փրսօ (66րդ) նշանակեցին Մոնաքոյի կողմը, մինչ Սոչօ իր ուշացած կողմ նշանակեց 88րդ վայրկեանին, այդ ալ փենսթիկով, շնորհիւ՝ Նիսա Սաւելիլի:

## ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ... Ծարուհակուած՝ Տրի Էլէն

Երկր ընտրութիւնն է, որուն վկայութիւնն է Ագգային Ժողովի պատգամաւորութեան համար Դաշնակցութեան առաջարկած թեկնածուներու ցուցակը, ուղղակի իր ընկերներէն ընտրուած ըլլաւ անոնք թէ գաւ ընտրական իր գինակիցներու շարքերէն:

Աւելին. վստահութեան ու պայքարունակութեան իր դրամագուլտիսին հետ՝ Դաշնակցութիւնը ընտրագանգուածին կը ներկայացնէ տնտեսական ու ընկերային վերականգնման իր այլընտրանքային ծրագիրը: Հաշուի առնելով հասարակփոխութեան դժուարին հանգրվանը ընտրող շայտատանի իւրաքանչեւ պայմանները՝ Դաշնակցութիւնը կ'առաջարկէ ընկերակարան քարեկարգումի կարելի ուղի, որ կը յատկանշուի ազգային արդիւնքներու անհի եւ աշխատատեղերու ստեղծման քաղաքականութեամբ, որուն կ'ընկերանայ, իբրեւ նախապայման, ընկերային թեքումը՝ անգործութեան մատնուած ժողովրդային յան շերտերը աշխատանքով ապահովելու, ընկերային ապահովութիւն հաստատելու, ընկերային արդարութեան հետամուտ ըլլալու եւ եկամտաւորութեան արդար թաշտում կատարելու յանձնարարութեամբ:

Ազնի աշխատանքով ու արդար վստահով ապրող եւ բարգաւաճող հասարակութիւն դառնալու տարբեր ուղի գոյութիւն չունի:

«Դրօշակ», Մայիս 2003

